

ԿԱՐԾԻՔ

Հասմիկ Թաթուլի Բիշարյանի «Բառապաշարային փոխներթափանցման հաղթահարումն աշակերտների անգլերեն հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում» թեմայով թեկնածուական ատենախոսության՝ ներկայացված

ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Գլոբալացումը և անգլերենի՝ որպես լինգվա ֆրանկա սրընթաց տարածումը փոխկապակցված աշխարհում, ամրապնդում են անգլերենի՝ որպես միջազգային հաղորդակցման լեզվի դիրքերը բոլոր ոլորտներում՝ սկսած գործարար աշխարհից վերջացրած արվեստով: Ներկայումս այն համարվում է պաշտոնական լեզու աշխարհի շուրջ 90 երկրներում, իսկ աշխարհում այդ լեզվով խոսողների թիվն անցնում է 1.5 միլիարդը¹: Հետևաբար, անգլերենի հաղորդակցման հմտությունների իմացությունը կարևոր առավելություն է անհատների համար ամբողջ աշխարհում, որի պատճառով այդ լեզվի արդյունավետ ուսուցումը դառնում է առաջնահերթություն աշխարհի գրեթե բոլոր պետությունների կրթակարգերի համար: Առաջ անցնելով և եզրակացություն անելով կատարված աշխատանքի հիման վրա, կարելի է ասել, որ ուսումնական ծրագրով նախատեսված փոխներթափանցող բառապաշարային միավորները հիմնականում չեն յուրացվում դպրոցականների կողմից, որը շատ մտահոգիչ է և խոսում է կրթական համակարգում անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման մեթոդաբանության մեջ գոյություն ունեցող լրջագույն խնդիրների մասին, որը պահանջում է հրատապ լուծումներ, և որը միաժամանակ վկայում է ատենախոսության թեմայի կարևորության և այժմեականության մասին: Ըստ աշխատանքում ներկայացված տվյալների՝ բառապաշարային միավորների շուրջ 60–70 %-ը չի յուրացվում աշակերտների կողմից:

¹ <https://www.novakidschool.com/blog/english-why-this-widely-spoken-language-is-a-global-language/#:~:text=English%20is%20an%20incredibly%20versatile,%2C%20technology%2C%20and%20the%20arts.>

Հասմիկ Թաթուլի Բիշարյանի «Բառապաշարային փոխներթափանցման հաղթահարումն աշակերտների անգլերեն հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում» խորագրով թեկնածուականատենախոսությունը լեզվական միջամտության երևույթի մանրակրկիտ և խորը ուսումնասիրություն է, որտեղ հեղինակը հատուկ շեշտադրում է այն մարտահրավերները, որոնք արդիական են Հայաստանում անգլերենը՝ որպես օտար լեզու, դասավանդելու և սովորելու համատեքստում:

Անգլերենը՝ որպես օտար լեզու դասավանդելու հիմնական նպատակը հաղորդակցական կարողությունների զարգացումն է: Ատենախոսության կենտրոնացումը բառապաշարի փոխներթափանցման հաղթահարման վրա չափազանց կարևոր է իրական կյանքի իրավիճակներում աշակերտների անգլերենով հաղորդակցվելու կարողությունը զարգացնելու գործընթացում:

Ինչպես նշում է ատենախոսության հեղինակը՝ «ուսուցման ժամանակակից մեթոդների և հաղորդակցական վարժությունների միջոցով փոխներթափանցող բառապաշարային միավորներ ուսուցանելն անհրաժեշտություն է՝ պայմանավորված օտար լեզվի դասավանդման առջև ծառայած մարտահրավերներին դիմակայելու, անձնակենտրոն ուսուցում ապահովելու և բառապաշարի ուսուցման նկատմամբ սովորողների կարծրացած պատկերացումները վերափոխելու միտումով» էջ 4/:

Ակնհայտ է, որ անգլերենի ուսուցման ավանդական մեթոդները հաճախ չեն կարող ապահովել բառապաշարային միավորների պատշաճ և արդյունավետ ուսուցումը, քանի որ ոչ բավարար չափով են աշակերտակենտրոն և ավելի հաճախ են հանգեցնում լեզվական սխալ ընտրությունների, որը բարդացնում է օտար լեզվի ուսուցման գործընթացը: Ատենախոսի առաջարկած մեթոդական համակարգը ներառում է լեզվի և մշակույթի ընդլայնված ընկալում՝ առաջարկելով միջավայրի հետ առավել ինտեգրված օտար լեզվի ուսուցում: Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օտար լեզվի ուսուցման դժվարությունները պայմանավորված են ոչ թե մայրենի լեզվի ազդեցությամբ, այլ նոր լեզվի յուրացման ընդհանրական առանձնահատկություններով: Շատ դեպքերում բառապաշարային փոխներթափանցումն ընկալվում է որպես բոլոր փոփոխությունների ամբողջականություն, որը երևում է լեզվական միավորներում թե՛ կառուցվածքային,

և թե՛ գործառնական մակարդակներում, այսինքն բառապաշարային միավորների իմաստների՝ խոսքում կիրառման ընթացքում²: Այս և այլ կարևոր մեթոդաբանական զարգացումներ ավելի են արդիական դարձնում Հասմիկ Բիշարյանի ատենախոսության թեման, ինչպես նաև հիմնավորում այն խնդիրների ուսումնասիրությունը, որոնք հանգեցնելու են անգլերենի ուսուցման գործընթացում ավելի արդյունավետ մեթոդների ներդրմանը՝ կրթական վերջնարդյունքներին հասնելու նպատակով:

Այսպիսով, ատենախոսի հետազոտության մեջ ձևակերպած նպատակն ավելի մեծ է, քան այն ներկայացված է հեղինակի կողմից: Եթե խնդիրը դիտարկենք արհեստական բանականության տեսանկյունից, ապա կարելի է ասել, որ Հասմիկ Բիշարյանի կողմից առաջարկվող մոդելը ռացիոնալ է, կառուցված է հստակ գործիքակազմի վրա և հեշտորեն կարող է հետագայում վերածվել անգլերենի ուսուցման մի կադապարի, որը հնարավորություն կտա օպտիմալացնել լեզվական դժվարությունների բացահայտման, կանխարգելման և հաղթահարման գործընթացը, համապատասխան համակարգչային ծրագրերի միջոցով: Դա կհանգեցի փոխներթափանցող բառապաշարային միավորների արդյունք հանդիսացող լեզվական սխալների նվազմանը և բառապաշարային միավորների արդյունավետ յուրացմանը:

Այսպիսով, ատենախոսության կիրառական նշանակություններից է նաև ապագայում արհեստական բանականության կողմից համապատասխան ծրագրի մշակումը, որը կհարմարեցնի ուսումնական նյութն ուսանողի կարիքներին՝ հաշվի առնելով նրա մայրենի լեզվի առանձնահատկությունները և օտար լեզվի իմացության մակարդակը՝ օպտիմալացնելով ուսուցման գործընթացը:

Հարկ է նշել, որ ատենախոսի կողմից ներկայացվող վարկածն առաջադեմ է, քանի որ դրա հիման վրա կարելի է եզրահանգել, որ օտար լեզվի ուսուցման մեթոդական բազայի թարմացման արդյունքում հնարավոր է մշտապես կատարելագործել լեզվի ուսուցման գործընթացը, քանի որ տիպային սխալների վերլուծությունը և դրանց հաղթահարման համար մասնագիտացված մոտեցումների

² Turayeva, M. (2019). Method of Teaching a Foreign Language as an Independent Theoretical and Applied Science. Молодой ученый, (28), 261-263.

մշակումը նպաստում են լեզվական գործընթացների ավելի խորն ըմբռնմանը և ուսուցման մեթոդների նպատակային և թիրախային օգտագործմանը:

Հասմիկ Բիշարյանի կողմից առաջ քաշված խնդիրները բխում են նպատակից և կարևոր են, ըստ իս, մի քանի պատճառով: Նախ և առաջ, դրանք ուղղված են լեզվական փոխներթափանցումների դեպքերի ընդլայնված ընկալումներին, ինչպես նաև նպաստում են մեթոդական համակարգի զարգացմանը, որը կարող է առաջարկել հատուկ մեթոդական կարգավորումներ:

Ատենախոսի կողմից առաջարկված խնդիրները և դրանց լուծումները նորարարական մոտեցում են առաջարկում ազլերենի դասավանդման գործընթացում, որի կիրառումն էապես կբարելավի աշակերտների լեզվական կոմպետենցիան և կհամապատասխանեցնի այն ներկայիս կրթության պահանջներին:

Ատենախոսությունն ունի հարուստ մեթոդաբանական հենք, այն հիմնված է լեզվաբանության, մեթոդաբանության, հոգեբանության և կրթական այլ գիտությունների համադրության վրա, որը հնարավորություն է տալիս իրականացնել թեմայի համակողմանի վերլուծությունը՝ ներառյալ

- Լեզուների համեմատական վերլուծության տեսությունը:
- Սխալների վերլուծության տեսությունը
- Հաղորդակցական ուսուցման մեթոդը:
- Ուսուցման այլընտրանքային մեթոդները:
- Աշակերտների հաղորդակցական, մտավոր, քննական, ստեղծագործական, հետազոտական, համագործակցային հմտությունների և կարողությունների զարգացման մոտեցումները:

Հասմիկ Բիշարյանի կողմից առաջարկված տեսությունները նպաստում են խնդրո առարկայի համակողմանի քննմանը և դարձնում ստացված արդյունքներն ավելի արժանահավատ և գիտականորեն հիմնավորված:

Աշխատանքի գիտական նորոյթը կարևոր է, քանի որ այն առաջարկում է համալիր մեթոդական համակարգի ներդնում, որը ներառում է լեզվական

դժվարությունների կանխարգելման և հաղթահարման մեթոդներ, ինչը հատկապես կարևոր է օտար լեզուների յուրացման գործընթացում:

Ատենախոսության գիտական նորույթը կարևոր է հետևյալ պատճառներով:

1. Ապահովում է կրթական համակարգի բարելավում: Ատենախոսն առաջարկում է նոր մեթոդներ և մոտեցումներ, որոնք կօգնեն ուսուցիչներին ավելի լավ կազմակերպել օտար լեզվի դասավանդման և ուսուցման գործընթացը և հասնել ուսուցման նպատակների իրագործմանը:

2. Իրականացնում է լեզվաբանական գիտական բացահայտումներ: Այն ներառում է լեզվական փոխներթափանցումների հիման վրա գիտական համակարգված մոտեցման կիրառում, որը կարևոր է լեզվաբանության մեջ նոր բացահայտումներ անելու համար:

3. Բարելավում է ուսուցման որակը: Ատենախոսի կողմից առաջարկվող մեթոդական համակարգը նպաստում է լեզվական մասնագիտական ուսուցումների որակի բարելավմանը, համապատասխանելով աշակերտների առանձին պահանջներին:

4. Նորացնում է կրթության բովանդակությունը: Այս նորույթը ներառում է համալիր մեթոդական մոտեցումներ, որոնք կօգնեն ուսուցիչներին ավելի լավ հասկանալ աշակերտների կարիքները և արդյունավետ դրանց արձագանքել:

Այս հետազոտության գործնական նշանակությունը առավել հստակ է՝ այն առաջարկում է նոր մոտեցում՝ անգլերենի մասնագետներին, իսկ ստացված մոտեցումները և արդյունքները կարող են կիրառվել ոչ միայն ՀՀ դպրոցների անգլերեն դասավանդող ուսուցիչների կողմից, այլև այլ կրթական հաստատություններում դասավանդող անգլերենի մասնագետների կողմից՝ ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթության համատեքստերում:

Հասմիկ Թաթուլի Բիշարյանի թեկնածուականատենախոսությունը համապատասխանում է խնդիրների բացահայտման շարադասությանը և

արդյունքների նկարագրմանը: Այն բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և 4 հավելվածից:

Ատենախոսության առաջին գլուխը՝ վերնագրված «Լեզվական փոխներթափանցումը, դրա տեսակները և հաղթահարման տեսական հիմունքներն անգլերենի, որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում», քննում է լեզվական փոխներթափանցման ուսումնասիրման հայ, ռուս և արտասահմանյան տեսաբանների մոտեցումները: Հեղինակը նշում է, որ հայ տեսաբանների կողմից այս խնդրի ուսումնասիրությունները սակավաթիվ են: Նույն գլխում քննվում են սխալների վերլուծության բազմաթից տեսություններ:

Երկրորդ գլուխը՝ վերնագրված «Հաղորդակցական անգլերենի ուսուցման գործընթացում բառապաշարային փոխներթափանցման հաղթահարման մեթոդական համակարգը», շեշտադրում է օտար լեզվի բառապաշարի ներլեզվական և միջլեզվական փոխներթափանցումները, դրանց դասավանդման նպատակով կիրառվող մեթոդների ուսումնասիրությունները, ինչպես նաև նկարագրում է ատենախոսի կողմից 2020–2021 թվականներին անցկացված հայտորոշիչ թեստավորման արդյունքները ՀՀ հիմնական դպրոցների 6–րդ, 7–րդ, 8–րդ և 9–րդ դասարաններում:

Ինչպես նշում է հեղինակը, թեստավորմանը մասնակցել է Երևանի 3 հիմնական դպրոցների 263 աշակերտ: Լավ կլիներ, որ ներկայացվեր նաև գենդերային բաշխվածությունը, որը հետագայում կարող էր նոր օրինաչափություններ բացահայտել և դառնալ նոր հետազոտության խնդրո առարկա: Ատենախոսությունը վկայում է, որ թեստավորումը կատարվել է պատշաճ ձևով, և դրան նախորդել է նախափորձարարական թեստավորումը, որը նվազեցրել է աշակերտների լարվածությունը և ստեղծել բարենպաստ միջավայր թեստավորումն անցկացնելու համար:

Աշխատանքում Հ. Բիշարյանը կիրառում է աղյուսակներ, գծագրեր ու դիագրամներ, ներառյալ գրաֆիկներ, գծապատկերներ, որոնք բարդ տեղեկատվությունն ավելի հասանելի են դարձնում՝ տեսողականորեն ցուցադրելով կատարված հետազոտության միտումները, հարաբերությունները և գործընթացները: Սա ոչ միայն նպաստում է ուսումնասիրվող երևույթների ավելի լավ

ընկալմանը, այլև ամրապնդում է փաստարկը՝ եզրակացությունները դարձնելով ավելի համոզիչ: Տվյալների վիզուալիզացիան ատենախոսության մեջ աջակցում է նյութի տրամաբանական ներկայացմանը՝ հետազոտությունն ավելի մատչելի և հետաքրքիր դարձնելով ավելի լայն լսարանի համար:

Ատենախոսության գրականության ցանկը պարունակում է հայրենական և արտասահմանյան հետազոտողների հիմնարար աշխատանքներ՝ մենագրություններ, ինչպես նաև հոդվածներ, առցանց և տպագիր, այլ հրապարակումներ՝ տպագրված ինչպես միջազգային հեղինակավոր գիտական հանդեսներում և միջազգային գիտաժողովների ժողովածուներում, որոնք համակողմանի են քննարկում հետազոտության թեման և ապահովում խնդիրների լուծումը:

Հասմիկ Բիշարյանի ատենախոսության եզրակացությունները լիարժեքորեն արտացոլում են կատարված աշխատանքը:

Սեղմագիրը և հրատարակված 6 հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Այնուամենայնիվ, կան որոշ դիտարկումներ, որոնց ևս կուզենայի անդրադառնալ:

1. Գործարար անգլերենի բառապաշարի հետ կապված հարցերը քննարկելիս, հեղինակը չի անդրադառնում մի այնպիսի կարևոր գործիքի, ինչպիսին է լեզուների իմացության համեմտության շրջանակը, որը հստակ նկարագրիչներ է սահմանում յուրաքանչյուր լեզվական մակարդակին համապատասխան լեզվական միավորների ընտրության համար:

2. Հեղինակն իր ատենախոսության մեջ նշում է, որ «իր համոզմամբ հաղորդակցական վարժությունների միջոցով փոխներթափանցող բառապաշարային միավորներ ուսուցանելու» համար կարելի է կիրառել նախագծային ուսուցման մեթոդը /էջ 74/: Բացի համոզմունքից, ի՞նչ այլ գիտական հետազոտությունների հիման վրա է ընտրվել այդ մեթոդը, և որքանով է դա արդյունավետ այդ փուլում բառապաշարային միավորների փոխներթափանցման դեպքերն ուսումնասիրելու համար:

3. Ըստ իս, աշխատանքն էապես կշահեր, եթե ատենախոսությունը՝ եզրակացությունից բացի, ունենար առաջարկությունների բաժին:

Առաջարկությունները կօգնեն ուսումնասիրության տեսական և գործնական արդյունքները վերածել կոնկրետ գործնական քայլերի, որոնք կարող էին օգտագործվել ուսուցիչների, մանկավարժների և ուսումնական ծրագրեր մշակողների կողմից: Այն ուղղակիորեն կապահովեր կապ հետազոտության և կրթական ոլորտում դրա գործնական կիրառման միջև: Ատենախոսը կարող էր նաև առաջարկություններ ներառել՝ հետագայում այս թեման ուսումնասիրող գիտնականներին՝ ընթացքում բացահայտված նոր հետազոտական ուղղությունների վերաբերյալ:

4. Լավ կլիներ, որ հավելվածները վերնագրվեին, քանի որ վերնագրերը կկողմնորոշեին ընթերցողին ավելի շուտ գտնել փնտրվող տեղեկատվությունը:

5. Կան նաև մի քանի վրիպումներ.

ա/ «Գիտամեթոդական գրականության վերլուծությունը և իրականացված հետազոտական աշխատանքը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները»/ թվի համաձայնեցում, Ատենախոսության սեղմագիր, էջ 16/

բ/ Գրականության ցանկում որոշ անգլերեն հոդվածների վերնագրերի լիմաստ բառերը սկսվում են փոքրատառով, որոշներինը՝ մեծատառով, որը խախտում է գրականության ցանկի հանդեպ կիրառված միասնական մոտեցումը/ օրինակ, 111, 114, 116, 119 – ներկայացված են փոքրատառով, 99, 113 – ներկայացված են մեծատառով/:

Չնայած նշված դիտարկումներին՝ Հ. Բիշարյանն իր թեկնածուական աշխատանքը շարադրել է գիտական կուռ լեզվով, հասկացական գործիքակազմի պահպանմամբ և ճշգրիտ օգտագործմամբ: Աշխատանքի ձևավորումը, բովանդակությունը, ստացված արդյունքները լիարժեքորեն բավարարում են թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը, եզրակացնում եմ, որ ատենախոսի «Բառապաշարային փոխներթափանցման հաղթահարումն աշակերտների անգլերեն հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում» ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր

պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Հասմիկ Թաթուլի Բիշարյանն արժանի է իր կողմից հայցած՝ ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Լուսինե Հրանտի Ֆլյան

բանասիրական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր

Հյուսիսային համալսարանի ուսումնահետազոտական և միջազգայնացման
գծով պրոռեկտոր

Հաստատում եմ պաշտոնական ընդդիմախոս

բանասիրական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր Լուսինե Հրանտի Ֆլյանի ստորագրությունը

Աստղիկ Աշոտի Աբրահամյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Հյուսիսային համալսարանի գիտքարտուղար

05.03.2024

